«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

1 հունիսի 2021թ. N 35-Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.5.2 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորական գործունեության հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հունիսի 1-ի N 35-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի գործառույթները 3
3. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կազմավորման կարգը 4
4. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նիստերը 5
5. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները 6
6. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները 7
7. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը 8
8. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 8

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնադրությունը մշակվել էի կատարումն«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.5.2կետերիպահանջների։

1.2 Սույնկանոնադրությամբ սահմանվում են Պալատի աուդիտորական գործունեության հանձնաժողովի (այսուհետ՝ Աուդիտորական գործունեության հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը։

1.3 Աուդիտորական գործունեության հանձնաժողովը Պալատի մշտական գործող մասնագիտական մարմին է։

1.4 Աուդիտորական գործունեության հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներով, Պալատի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և Պալատի համապատասխան այլ ներքին իրավական ակտերով։

1.5 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորական գործունեությանհանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊ աուդիտորական գործունեությանհանձնաժողով»։

1.6 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին։ Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը կարող է ունենալ իր անվանմամբ հայերենով, ռուսերենով և անգլերենով ձևաթղթեր և/կամ անհատականացման այլ միջոցներ։

1.7 Աուդիտորական գործունեության հանձնաժողովնիր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքով։

2. Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի գործառույթները

2.1 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի հիմնական գործառույթներն են.

2.1.1 Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների, Մասնագիտական էթիկայի կանոնագրքի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությանն աջակցություն,

2.1.2 Համագումարների, սիմպոզիումների, աշխատաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում՝ կապված աուդիտորական գործունեության զարգացման, ոլորտին

վերաբերող մասնագիտական քննարկումների, ինչպես նաև դրանց վերաբերող այլ հարցերի հետ.

2.1.3 Աուդիտորական գործունեության վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում,հրապարակում և տարածում.

2.1.4 Աուդիտորական գործունեության ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում.

2.1.5 Աուդիտորական կազմակերպությունների մեթոդաբանական բազայի ստեղծմանը և/կամ բարելավմանըաջակցություն.

2.1.6 Պալատի անդամներին աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ մեթոդական օժանդակության տրամադրում.

2.1.7 Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների՝ աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված օրինական շահերի պաշտպանության նպատակով մասնագիտական օժանդակում (ներառյալ, բայց չսահմանափակվելով գրավոր կարծիքների կամ դիրքորոշումների տրամադրմամբ)՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ և դատական մարմինների հետ հարաբերություններում.

2.1.8 Աուդիտորական գործունեությանհետ կապված՝Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ։

2.2 Բացի 2.1 կետում նշված հիմնական գործառույթներից, Աուդիտորական գործունեության հանձնաժողովը կարող է իրականացնել նաև հետևյալ գործառույթները.

2.2.1 Օժանդակել Պալատի հատուկ և մասնագիտական մյուս հանձնաժողովների և Պալատի աշխատակազմի կողմից Պալատի անդամների հետ փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը.

2.2.2 Գործնական կապեր հաստատել և համագործակցել արտերկրի համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ.

2.2.3 Գործնական կապեր հաստատել և իր գործառույթների մասով համագործակցել պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների համապատասխան մասնագետների, ստորաբաժանումների հետ:

3. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կազմավորման կարգը

3.1 Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամ կարող են լինել միայն Պալատի անդամ աուդիտորները։

3.1.1. Աուդիտորական գործունեության հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը: (*փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 18-Լ)*

3.2 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը բաղկացած է 7 անդամից:

3.3 Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահը, նշանակվում են Պալատի խորհրդի կողմից: (*փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 18-Լ)*

3.4 Պալատի խորհրդի կողմից նախապես նշանակվում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նախագահը:

3.5 Պալատի աշխատակազմնէլեկտրոնային փոստի և/կամ Պալատի պաշտոնական կայքի միջոցով հայտարարություն է տարածում Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամների թեկնածուների ներգրավման վերաբերյալ:

3.6 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամ կարող է ընտրվել աուդիտորական գործունեության հետ կապվածառնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը:

3.7 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նախագահն ուսումնասիրում է Պալատի աշխատակազմի կողմից իրեն ներկայացված Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կազմում ներգրավվելու հետաքրքրություն ունեցող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվով անդամների: Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է անհրաժեշտ թվով Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամներին: Խորհուրդը, Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում թեկնածուների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները:

3.8 Այն դեպքում, երբ Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ (մինչև 4 տարվա ժամկետի լրանալը) դադարում է, ապա սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ (պաշտոնավարումը դադարած) անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

4. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նիստերը

4.1 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով:

4.2 Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նիստը հրավիրվում է Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ: Նիստերի արդյունքներն արձանագրվում են: Նիստերը նախագահում է Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա անդամներից տարիքով ավագը:

4.3 Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նիստերնանցկացվում են հանձնաժողովի անդամների համատեղ հավաքի ձևով՝ կամ ֆիզիկապես մասնակցությամբ, կամ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.4 Աուդիտորական գործունեության հանձնաժողովում քվորումն առկա է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը որոշումներն ընդունում է հանձնաժողովի նիստիներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

5. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

5.1 Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

5.1.1 մասնակցել Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը.

5.1.2 ներկայացնել հարցեր Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նիստերում քննարկելու համար.

5.1.3 արտահայտել տեսակետ Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

5.1.4 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից:

5.2 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամները պարտավոր են.

5.2.1 մասնակցել Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նիստերին:Եթե Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին նախապես տեղեկացնի Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նախագահին.

5.2.2 սահմանված ժամկետներում իրականացնել իրենց հանձնարարված աշխատանքները:

5.3 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամներն իրավասու չեն իրենց լիազորությունները փոխանցել այլ անձանց:

5.4 Եթե Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամն անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ մեկտարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի կեսից ավելիից, ապա Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը նիստին մասնակցող անդամներիձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմելուՊալատի խորհրդին՝ տվյալ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և փոխարենը նոր անդամ նշանակելու հարցով:

6. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

6.1 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի գործունեությունը կազմակերպում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նախագահը:

6.2 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նախագահը.

6.2.1 կազմակերպում և ղեկավարում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի ընթացիկ աշխատանքը.

6.2.2 ապահովում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի առջև դրված խնդիրների պատշաճ և ժամանակին կատարումը.

6.2.3 բաշխում է պարտականություններնԱուդիտորական գործունեությանհանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ.

6.2.4 որոշում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ձևը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

6.2.5 հրավիրում և անցկացնում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

6.2.6 ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը և պահպանումը.

6.2.7 Պալատի խորհրդին զեկուցում է Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի տարեկան ծրագրի և տարեկան գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ.

6.2.8 որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության:

7. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը

7.1 Աուդիտորական գործունեության հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, որը ներկայացնում է Պալատի խորհրդի հաստատմանը՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան նախորդող նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

7.2 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

8. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

8.1 Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի նյութատեխնիկական ապահովումը ննրանանհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Աուդիտորական գործունեությանհանձնաժողովի կողմից կազմված և Պալատի խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և դրա իրականացման նպատակով նախատեսվածնախահաշիվների համաձայն: